-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 13/12

Քաղ. Երեւան 29 օգոստոսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. օգոստոսի 29-ի նիստում (արձանագրություն N 5.1) քննարկեց «Անհուայ Ցզանհուայ Աութոմոբայլ Գրուփ Քո. Լթդ.» ընկերության ներկայացուցիչ Վ. Պետրոսյանի կողմից 2012թ. հուլիսի 2-ին ներկայացված (հայտի համարը 20111357) պատկերային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» Կարգի 111-րդ կետը և 118-րդ կետի 1-ին ենթակետը, համաձայն որոնց, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն ընդհանուր առմամբ զուգորդվում է Daimler AG ընկերությանը պատկանող (Mercedesstrasse 137, 70327 Stuttgart (DE) IR 212728, 447759, 574934, 997904) ապրանքային նշաններին, այսինքն՝ տվյալ նշանի հիմնական տարրը կատարված է այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ կարող է պատկերացում առաջանալ մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որի հետ ինքն արդեն առնչվել է:

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և իր բողոքում բերել է ստորև նշված փաստարկները:

Նշված է, որ բողոքարկվող նշանը հնգաթև աստղ է ներգծված օվալի մեջ, իսկ հակադրվածը եռաթև աստղ է ներգծված շրջանի մեջ: Աստղի թևերը տարբեր երկարություններ ունեն և ոչ սիմետրիկ են դասավորված կենտրոնի նկատմամբ, իսկ հակադրվածի թևերը նույն երկարությունն ունեն ու սիմետրիկ են: Բողոքարկվող նշանի ոչ սիմետրիկությունը և հակադրվածների սիմետրիկությունն անմիջապես աչքի է զարնում:

Բողոքարկողը պնդում է, որ նշանների տեսողական տպավորությունը տարբեր է, ամփոփելով իր բողոքը, խնդրել է չեղյալ ճանաչել փորձաքննության որոշումը և գրանցել հայտարկված ապրանքային նշանը:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հուլիսի 2-ին «Անհուայ Ցզանհուայ Աութոմոբայլ Գրուփ Քո. Լթդ.» ընկերության կողմից ներկայացվել է (հայտի համարը N 20111357) պատկերային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը:

Նշվեց նաև, որ Բողոքարկվող նշանը նախատեսված էր օգտագործվելու ավտոմեքենաների, ավտոբուսների և այլ փոխադրամիջոցների համար, որոնք հանդիսանում են թանկարժեք ապրանքներ և որոնց ձեռքբերումից առաջ գնորդը սովորաբար կատարում է մանրազնին ուսումնասիրություններ, համեմատում տարբեր արտադրողների բրենդները ու հստակ պատկերացում ունենում մեքենայի մակնիշի, արտադրողի, երկրի, մոդելի, բնութագրերի, գնի մասին, ինչպես նաև սպառողի աչալրջությունը և տեղեկացվածության մակարդակը էապես նվազեցնում է քննվող նիշերի շփոթության հնարավորությունը:

Կոլեգիայի անդամը նշեց, որ համաձայն բողոքի՝ նշանի սեփականատեր «Անհուայ Ցզանհուայ Աութոմոբայլ Գրուփ Քո. Լթդ.»-ն (հայտնի է նաև JAC Motors անվամբ) մտնում է չինական խոշոր ավտոարտադրողների հնգյակի մեջ, որը հիմնադրվել է 1964 թվականին: Ընկերությունը արտադրում է մեքենաներ, ավտոբուսեր և բեռնատարներ, որոնք արտահանում է ավելի քան 100 երկրներ:

Կոլեգիայի անդամը նշեց, որ Կոլեգիան մանրամասն քննարկել է բողոքը և հանգել այն եզրակացության, որ կարելի է գրանցել բողոքարկված ապրանքային նշանը և այդ ուսումնասիրության արդյունքները ներկայացվեց խորհրդի քննարկմանը:

Բողոքարկման խորհուրդը, ընդանուր վերլուծության արդյունքում, եկավ այն եզրակացության, որ բողոքարկողի փաստարկները համոզիչ են և սպառողը չի կարող շփոթել «Daimer AG» ընկերության «Mercedes» ապրանքային նշանը բողոքարկված «Անհուայ Ցզանհուայ Աութոմոբայլ Գրուփ Քո. Լթդ.» ընկերության (հայտի համարը 2011135) պատկերային ապրանքային նշանի հետ:

«Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 08.02.2012թ. և կրկնական փորձաքննության՝ 02.04.2012թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել «Անհուայ Ցզանհուայ Աութոմոբայլ Գրուփ Քո. Լթդ.» ընկերության N 20111357 պատկերային ապրանքային նշանը հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան